«Ամերիաբանկ» ՓԲԸ
+37410 561111, office@ameriabank.am

Հավելված № 2
Արժեթղթերի շուկաներում բրոքերային ծառայությունների
մատուցման և Բրոքերային հաշիվների սպասարկման պայմանագրի

«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (ԲՐՈՔԵՐ) ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ընդունվել է Բանկի Տնօրինության 10.04.2015 թ. թիվ 02/39/15 որոշմամբ, գործող խմբագրությունը՝ 25.05.2023թ-ի թիվ 02/65/23 որոշմամբ և ուժի մեջ է ներքևում նշված ամսաթվից:

1. ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.1 Սույն պայմաններում օգտագործվող հասկացությունները ունեն հետևյալ նշանակությունը:

ԱՀ (Առևտրային համակարգ)՝ ցանկացած կարգավորվող շուկա և արժեթղթերի/ածանցյալների առևտրի կազմակերպման համար ներգրավված այլ միջոց, կազմակերպություն կամ համակարգ, որը որոշակի կանոնների համաձայն ապահովում է արժեթղթերի առքուվաճառք և դրա արդյունքում փոխադարձ պարտավորությունների հաշվարկներ, քլիրինգ/զուտացում և վերջնահաշվարկ իրականացնելու հնարավորություն և միջոցներ:
ԱՀ կանոններ՝ Բրոքերի կողմից սույն պայմանների համաձայն բրոքերային ծառայությունների մատուցման համար օգտագործվող ԱՀ-ի գործող ներքին կանոններ, ընթացակարգեր, քաղաքականություն, կարգադրություններ, կանոնակարգեր, որոնց կատարումը պարտադիր է այդ համակարգի անդամների կամ դրանից օգտվող այլ անձանց համար:
Առևտրային նստաշրջան՝ ժամանակահատված, որի ընթացքում ԱՀ կանոնների համաձայն տվյալ ԱՀ-ում տեղի է ունենում արժեթղթերի/ածանցյալների առևտուր:
Ածանցյալ՝ համաձայն Օրենքի 3-րդ կետով սահմանված ածանցյալ ֆինանսական գործիք սահմանմանը:
Գործակալ՝ անձ, որի ներգրավմամբ և միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով՝ Բրոքերը մատուցում է Բրոքերային ծառայությունները Հաճախորդին:
Գործառնական օր՝ ցանկացած աշխատանքային օրվա 09^{30}-ից 20^{00}, երբ Բրոքերը իրականացնում է գործառնություններ:
Գործարք՝ Արժեթղթերի առքուվաճառքի գործարքներ, որոնք կատարվում են Հանձնարարականների հիման վրա՝ ցանկացած ԱՀ-ում՝ համապատասխան ԱՀ կանոնների համաձայն կամ ԱՀ-ից դուրս:
Ոչ բավարար ծածկույթով գործարքներ՝ հաճախորդի անունից հաճախորդի հանձնարարականի համաձայն Բանկի կողմից կատարվող գործարքներ (կամ գործարքներ, որոնց կատարման Հանձնարարականը ընդունում է Հաճախորդից և հաղորդում է երրորդ անձանց ի կատարում), որոնց վերաբերյալ համապատասխան Հանձնարարականը ներկայացնելու պահին Հաճախորդի հաշվին

14TRD RL 72-20/1, Խմբ. 8
Ուժի մեջ է 09.06.2023 թ-ից:

առկա չեն դրանով նրա պարտավորությունները կատարելու համար անհրաժեշտ Միջոցներ և այդ Միջոցները փոխառվում են Բրոքերից անմիջապես կամ նրա միջոցով՝ Գործակալներից:

Գործարքի էական պայմաններ՝ արժեթղթերի տեսակը և թողարկողը (կամ_վերջինիս տարբերակիչ ծածկագիրը), գործարքի տեսակը (արժեթղթի առք, վաճառք, ածանցյալով Հաճախորդի իրավունքների իրականացման գործարք, բաժանորդագրության պատվեր, ռեպո, հակադարձ ռեպո), Հանձնարարականով կատարման ծավալը (արժեթղթերի/քանակը), միավոր արժեթղթի գնման/վաճառքի/կատարման գնային սահմանափակումները (եթե պատվերը շուկայական չէ):

Շուկայական պատվեր՝ Հաճախորդի կողմից Բրոքերին տրվող Հանձնարարական, որը նախատեսում է գնման և/կամ վաճառքի Հանձնարարականի անհապաղ կատարում այդ պահին շուկայում ձևավորված գնով:

Գնման/վաճառքի ստոպ պատվեր՝ Հաճախորդի կողմից Բրոքերին տրվող Հանձնարարական, որը նախատեսում է Հանձնարարականի կատարում (արժեթղթերի առք/վաճառք) շուկայում ձևավորված գնով (որպես շուկայական)՝ համապատասխան ԱՀ-ում տվյալ արժեթղթի գինը Հանձնարարականում նշված գնին հասնելու դեպքում, ընդ որում փաստացի կատարման գինը մինչև փաստացի կնքման պահը տեղի ունեցած շուկայական տատանումների արդյունքում կարող է տարբերվել Հանձնարարականում նշված գնից թե՛ հօգուտ Հաճախորդին և թե՛ ի վնաս նրան:

Գնման/վաճառքի լիմիտային պատվեր՝ Հաճախորդի կողմից Բրոքերին տրվող Հանձնարարական, որը նախատեսում է Հանձնարարականի կատարում՝ Հանձնարարականում ֆիքսված գնից ոչ բարձր գնով՝ առքի դեպքում, և ոչ ցածր գնով՝ վաճառքի դեպքում, արժեթուղթ գնելու/վաճառելու պայմանով:

Գնման/վաճառքի ստոպ լիմիտային պատվեր՝ Հաճախորդի կողմից Բրոքերին տրվող Հանձնարարական, որը միաժամանակ ներառում է գնման (վաճառքի) լիմիտային պատվերը մի գնով և գնման (վաճառքի) ստոպ պատվերը մեկ այլ գնով, այն է՝ Հանձնարարականը պարունակում է դրա կատարման հնարավորություն բացառապես համապատասխան ԱՀ-ում համապատասխան արժեթղթի գինը Հանձնարարականում նշված արժեքին հասնելու դեպքում և միևնույն ժամանակ պարունակում է՝

- Հաճախորդի կողմից առքի դեպքում՝ գործարքի կատարման առավելագույն գնի սահմանում
- Հաճախորդի կողմից վաճառքի դեպքում՝ գործարքի կատարման նվազագույն գնի սահմանում

Դիրք կամ բաց դիրք՝ յուրաքանչյուր Գործարքով Հաճախորդի պահանջների ու պարտավորությունների կշիռ՝ արտահայտված արժույթով կամ արժեթղթերով, որը հավասար չէ զրոյի:

Հանձնարարական՝ Հաճախորդի կողմից Պայմանագրով և/կամ սույն պայմաններով համաձայնեցված եղանակներով Բրոքերին ներկայացվող և Հաճախորդի Միջոցների հաշվին Բրոքերի կողմից կատարման կամ Բրոքերի կողմից երրորդ անձանց ի կատարում հաղորդման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ, էլեկտրոնային կամ ձայնային հաղորդագրություն, որի նպատակը Հաճախորդի կողմից Արժեթղթերի օտարումը կամ ձեռքբերումն է:

Հաղորդագրություն՝ ցանկացած տեղեկատվության առաքում, փոխանակում, ծանուցում, Հանձնարարականի ներկայացում, որ տեղի է ունենում Հաճախորդի և Բրոքերի Պայմանագրի շրջանակներում:

Հաճախորդի հաշիվ՝ Բրոքերային հաշիվը, Պահառության պայմանագրում նշված արժեթղթերի հաշիվը և դրանց ենթահաշիվները միասին՝ միավորված մեկ միասնական ծածկագրի ներքո:

Պայմանագիր՝ Հաճախորդի և Բրոքերի միջև կնքվող, Արժեթղթերի շուկաներում Բրոքերային ծառայությունների մատուցման, կոմիսիայի և բրոքերային հաշիվների սպասարկման

պայմանագիրեր, որի անբաժանելի մասն են կազմում սույն պայմանները: Սույն պայմաններում **«Պայմանագիր»** բառի (հասկացության) օգտագործումը չի ներառում սույն պայմանները, եթե հատուկ նշված չէ այդպիսի ներառման մասին:

Միջոցներ՝ դրամ (ցանկացած արժույթի) և արժեթղթեր, որոնք Հաճախորդը տրամադրել է Բրոքերին իր հանձնարարականների կատարման և վերջնահաշվարկի ապահովման նպատակով կամ որոնք առաջացել են (ստացվել են) հաճախորդի հանձնարարականները կատարվելու արդյունքում:

Կիրառվող իրավունք՝ այն երկրի օրենքները և համապարտադիր բնույթ կրող այլ իրավական ակտերը, որոնք տարածվում են ի կատարումն Պայմանագրի և սույն Պայմանների Բրոքերի կողմից իրականացված գործողությունների նկատմամբ :

Վերջնահաշվարկ՝ գործարքի կատարման ժամկետի լրացման կապակցությամբ փոխադարձ պարտավորությունների կատարում դրանց կատարման ժամկետին, որն իր կատարման կարգով հանդերձ սահմանված է տվյալ գործարքի կնքման գործող պայմաններով:

Օրենք՝ «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենք:

Վերջնահաշվարկի շեղման հնարավորությունն՝ ծառայություն, որի շրջանակներում Բրոքերը կատարում է կամ ի կատարում է հաղորդում/փոխանցում Հաճախորդի Հանձնարարականները՝ Հաճախորդի հաշվին գործարքի վերջնահաշվարկի համար բավարար միջոցների բացակայության պարագայում, սակայն միայն այն պայմանով, որ այդպիսի միջոցները ամեն դեպքում առկա կլինեն և կփոխանցվեն Բրոքերին գործարքի կատարման օրվա ընթացում:

Վերջնահաշվարկի շեղման առավելագույն մեծություն՝ ՀՀ դրամով (համարժեքը այլ արժույթով) արտահայտված առավելագույն մեծություն, որ Բրոքերը համաձայն է տրամադրել Հաճախորդին՝ Վերջնահաշվարկի շեղման հնարավորությամբ սպասարկվելու նպատակով:

1.2 Սույն պայմաններում օգտագործվող այլ հասկացությունները, սահմանված չլինելու դեպքում, ունեն Օրենքում և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերում սահմանված նշանակությունը, իսկ եթե այդպիսինը դրանցով սահմանված չէ՝ միջազգային գործարար սովորույթների համաձայն այդ հասկացություններին տրվող նշանակությունը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից:

1.3 Եթե ակնհայտորեն այլ բան չի բխում սույն պայմանների որևէ դրույթի կոնկրետ համատեքստից դրանց դրույթների մեկնաբանության սկզբունքները հետևյալն են՝

1) Ցանկացած փաստաթղթի /ներառյալ, առանց սահմանափակման, Պայմանագիրը/վկայակոչումը, մեջբերումը կամ դրան հղումը ենթադրում է տվյալ փաստաթղթի գործող տարբերակին, ներառյալ բոլոր փոփոխություններն ու լրացումները մեջբերում, վկայակոչում կամ դրան հղում, եթե տվյալ վկայակոչման, մեջբերման կամ հղման մեջ չի արված հատուկ նշում ի հակառակը.
2) Կետերին բոլոր հղումները վերաբերում են սույն պայմանների կետերին, եթե չի արված հատուկ նշում ի հակառակը.
3) Գլուխների անվանումներն ունեն կողմնորոշիչ նշանակություն և չեն ազդում դրանց բովանդակության նշանակության վրա.
4) Եզակի թվով սահմանված հասկացություններն արտահայտում են նույնի հոգնակի թիվը ու հակառակը, եթե այլ բան չի բխում հասկացության կոնկրետ կիրառման դեպքից.
5) Ցանկացած անձին վկայակոչումը վերաբերվում է նաև ժամանակ առ ժամանակ նրան փոխարինող անձին, նրա ներկայացուցչին կամ իրավահաջորդին.
6) «Սույն պայմանագիր» բառի (հասկացության) օգտագործումը վերաբերում է Պայմանագրին՝ բոլոր հավելվածներով՝ ներառյալ սույն պայմանները.

7) պայմանագրում օգտագործվող «սույնով», «սույնում», «սույն» համաձայն, արտահայտությունները և նման նշանակություն ունեցող այլ բառերը վերաբերում են տվյալ դրույթը պարունակող կետին:

2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՐՈՔԵՐԻ ՄԱՍԻՆ

2.1 Լրիվ անվանումը՝ «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերություն. կրճատ անվանումը՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ (սույն կանոններում՝ Բրոքեր):

2.2 Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, 0015, Վազգեն Սարգսյան 2:

2.3 Էլեկտրոնային հասցեն՝ office@ameriabank.am; ինտերնետային կայքը՝ www.ameriabank.am, հեռախոսահամարը՝ (+374 10) 56 11 11 , (+374 12) 56 11 11:

2.4 Բրոքերը բրոքերային ծառայությունների մատուցումը համատեղում է Օրենքով նախատեսված այլ տեսակի ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունների մատուցման և բանկային գործառնությունների հետ՝ Բանկային գործունեության լիցենզիայի հիման վրա:

2.5 Բրոքերը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից, որը գտնվում է ք. Երևան, Վազգեն Սարգսյանի 6 հասցեում, հեռ՝ 583 841, կայք՝ www.cba.am, էլ. փոստ՝ mcba@cba.am:

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1 Սույն պայմաններով կարգավորվում են Բրոքերի և հաճախորդի միջև հարաբերությունները՝ կապված Պայմանագրում նշված, ինչպես նաև հետևյալ ծառայությունների մատուցման հետ՝

1) Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքում,
2) Վերջնահաշվարկի համար անհրաժեշտ արժույթի տրամադրում/փոխանակում.
3) Վերջնահաշվարկի ապահովում,
4) Բրոքերային ծառայությունների առնչությամբ պահառուական գործառնություններ

3.2 Սույն պայմանների բոլոր փոփոխությունները և լրացումները հանդիսանում են սույն պայմանների անբաժանելի մասը:

3.3 Սույն պայմանները և Պայմանագիրը կազմում են միմյանց անբաժանելի մասը և միայն միասին են հանդիսանում վավեր, Կողմերի համաձայնությունն ու կամահայտնությունն ամբողջությամբ արտահայտող, գործադրելի և կատարման ենթակա դրույթներ պարունակող փաստաթուղթ, ընդ որում, եթե Պայմանագրով նախատեսված է այլ բան, քան սույն պայմանների դրույթներում, ապա գերակայում է Պայմանագրի համապատասխան դրույթը: Սույն կետում նշվածը չի սահմանափակում Պայմանագրի և սույն պայմանների միմյանցից առանձին վկայակոչման ու հիշատակման հնարավորությունը Պայմանագրի և սույն պայմանների տեքստում:

3.4 Սույն պայմաններում փոփոխությունները և լրացումները կատարվում են բանկի կողմից միակողմանիորեն՝ այդպիսի փոփոխությունից կամ լրացումից հետո փոփոխության/լրացման մասին Հաճախորդին ծանուցելու պայմանով: Հաճախորդի համար տվյալ փոփոխությունը ուժի մեջ է մտնում փոփոխության վերաբերյալ ծանուցումը ստանալու օրվան հաջորդող 11-րդ օրը:

3.5 Պահպանելով հաճախորդի նկատմամբ իր ֆիդուցիար պարտականությունները՝ Բրոքերը սույն պայմանագրի համաձայն ծառայություններ մատուցելիս առանց Հաճախորդի համաձայնության կարող է օգտվել երրորդ անձանց ծառայություններից: Հաճախորդի Հանձնարարականները կատարելու համար Բրոքերն իր հայեցողությամբ իրավունք ունի ներգրավել նաև այլ կազմակերպություններ, այդ թվում՝ արժեթղթերի շուկայում մասնագիտացված անձանց, ինչպես նաև օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններից և ԱՀ-ներից, եթե Հաճախորդի հանձնարարականում չի նշված այն կոնկրետ միջնորդը, որի հետ Բրոքերը պայմանագրային հարաբերություններ է հաստատել:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1 Բրոքերը Հաճախորդի հանձնարարականները կատարում է կամ հաղորդում է երրորդ անձանց ի կատարում միայն այն դեպքերում, երբ Հաճախորդի հաշվում առկա են այդ Հանձնարարականների համաձայն կատարվող գործարքով վերջնահաշվարկ կատարելու և Բրոքերի նկատմամբ Հաճախորդի պարտավորությունները մարելու համար բավարար դրամական միջոցներ, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարվում է կամ ի կատարում է հաղորդվում/փոխանցվում Ոչ բավարար ծածկույթով կամ Վերջնահաշվարկի շեղման հնարավորությամբ գործարքի կնքման հանձնարարական, որի պայմանները կարգավորվում են առանձին համաձայնագրով:

4.2 Հանձնարարականի ընդունումը, ընդունված հանձնարարականի կատարումը և/կամ ի կատարում հաղորդումը կարող է մերժվել, եթե՝

1) Այն չի ներկայացվել սույն պայմաններին համապատասխան ձևով և բովանդակությամբ.
2) Այն չի ներկայացվել սույն պայմաններով սահմանված կարգով.
3) Բրոքերի մոտ հիմնավոր կասկածներ են առաջացել Հանձնարարականը ներկայացնող անձի՝ այն ներկայացնելու իրավասություն ունենալու վերաբերյալ՝ ինքնությունը պարզելու համար սույն պայմաններով սահմանված գործողությունները կատարելու արդյունքում:
4) Սույն պայմաններով սահմանված մնացած դեպքերում:
5) Բրոքերի Գործակալները մերժում են համապատասխան Հաճախորդի կողմից ներկայացված և Բրոքերի կողմից իրենց ի կատարում հաղորդված Հանձնարարականի ընդունումը ի կատարում և/կամ կատարումը՝ հաշվի առնելով նրանց կողմից որոշակի շուկաներում և ԱՀ-ներում գործարքների կնքում/կատարումը ապահովելու հնարավորության բացակայությունը:
6) Բրոքերի համար իրենից անկախ ցանկացած պատճառով օբյեկտիվորեն անհնարին է դարձել Հանձնարարականի կատարումը կամ դրա հաղորդումը ի կատարում:
7) Համապատասխան ԱՀ-ի կամ Գործակալների կողմից սահմանվում են կամ կիրառվում Հանձնարարականի կատարումը անհնարին դարձնող արգելքներ և սահմանափակումներ:
8) Բրոքերի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում:

4.3 Հաճախորդի կողմից արդեն իսկ տրված Հանձնարարականի չեղարկումն իրականացվում է որպես կանոն մինչև 10 (տասը) րոպեի ընթացքում:

4.4 Բրոքերային ծառայություններից օգտվելիս Հաճախորդը պարտավոր է՝

1) Ժամանակին Բրոքերին ներկայացնել Բրոքերի կողմից սահմանված արժեթղթերի հաշվի բացման և Բրոքերի կողմից ամբողջ պայմանագրով նախատեսված այլ պահառուական գործառնությունների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը.
2) Բրոքերին անմիջապես տեղեկացնել Բրոքերային պայմանագրով և սույն պայմաններով ներկայացված տեղեկություններում/փաստաթղթերում ներառված տվյալների ցանկացած փոփոխության վերաբերյալ՝ այդպիսի փոփոխությունից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

5. ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

5.1 Գործարք կնքելու համար Հաճախորդը Բրոքերին է ներկայացնում Հանձնարարական, որը պետք է պարունակի Գործարքի էական պայմանները: Հանձնարարականում կարող է նշվել նաև սույն պայմաններով սահմանված՝ Հանձնարարականի տեսակներից մեկը, ինչպես նաև Հանձնարարականի վավերության (կատարման ենթակա լինելու) ժամկետները՝ արտահայտված

օրերով կամ մինչև հետկանչում: Հանձնարարականի տեսակը նշված չլինելու դեպքում այն համարվում է Շուկայական պատվեր: Հանձնարարականի վավերության ժամկետ նշված չլինելու դեպքում այն վավեր է մինչև տվյալ ԱՀ-ում՝ գործարքի կատարման Հանձնարարականը ներկայացնելիս կամ դրանից հետո սկսված առաջին Առևտրային նստաշրջանի ավարտը:

5.2 Հաճախորդի միջոցներով Գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում Հաճախորդի կողմից Բրոքերի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակված՝ բանկի բրոքերային ծառայությունների մատուցմանը վերաբերող ներքին իրավական ակտերով սահմանված Հանձնարարականի ձևին համապատասխան լրացված թղթային, ինչպես նաև Գործարքի էական պայմանները պարունակող՝ էլեկտրոնային փոստով, էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցովկամ հեռախոսով Բրոքերին հաղորդված Հանձնարարականները :

5.3 Էլեկտրոնային փոստով Հանձնարարական ներկայացնելը նախընտրելով՝ Հաճախորդը գիտակցում է, որ Բրոքերից անկախ տեխնիկական և այլ հանգամանքները հաշվի առնելով, բացառված չէ, որ ուղարկված Հանձնարարականը չի հասնի Բրոքերին, նրան կհասնի ուշացումով, ուղարկված լինի համապատասխան լիազորություն չունեցող երրորդ անձանց կողմից կամ վերջիններիս հայտնի դարձած լինի այլ միջոցներով, այդ թվում ցանցային խափանումների, ցանցային չարտոնված մուտքերի, գաղտնաբառերի չարտոնված օգտագործման և այլ միջոցներով ու եղանակներով: Սույնով Կողմերը համաձայնում են, որ Բրոքերը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում սույն կետում նշված իրադարձությունների արդյունքում Հաճախորդի կրած վնասների համար, իսկ Հաճախորդի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեից ստացված Հանձնարարականը Բրոքերի կողմից դիտարկվելու է որպես Հաճախորդից ստացված:

5.4 Հաճախորդի կողմից Հանձնարարականը էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ներկայացնելու դեպքում Հաճախորդը կարող է հավաստիանալ Բրոքերի կողմից Հանձնարարականը ստանալու փաստի վերաբերյալ հեռախոսազանգի և Բրոքերի լիազոր աշխատակցի հետ հեռախոսազրույցի միջոցով, որի ընթացքում լիազոր ներկայացուցիչը հաստատում է կամ հերքում նույն զրույցի ընթացքում Հաճախորդի կողմից նկարագրված էական պայմաններով գործարք կնքելու էլեկտրոնային Հանձնարարականի ընդունման փաստը: Նշված փաստը Հաճախորդի համար կարող է հավաստել նաև էլեկտրոնային փոստի համապատասխան օպերատորը՝ հաճախորդի կողմից ուղարկվող էլեկտրոնային հաղորդագրությունների ստացումը համապատասխանող հետադարձ ծանուցման ռեժիմ ընտրելու դեպքում, որի հավաստիության համար սակայն Բրոքերը պատասխանատվություն չի կրում:

5.5 Հեռախոսով փոխանցվող Հանձնարարականները ձայնագրվում են Բրոքերի կողմից և սույնով հաճախորդը տալիս է իր համաձայնությունը Բրոքերի հետ իր հաղորդակցությունների փոխանակման ձայնագրությանը: Հեռախոսով հանձնարարական ընդունելիս Բրոքերի լիազորված աշխատակիցը իրավունք ունի իր հետ կապ հաստատած անձի ինքնությունը ճշտելու նպատակով վերջինիս ուղղել դրա համար անհրաժեշտ հարցեր, այդ թվում հարցնել Հաճախորդին տրամադրված ծածկագրային քարտի ծածկագրերից մեկը կամ մի քանիսը, Պայմանագրի վավերապայմանները և Հաճախորդի նույնականացման համար անհրաժեշտ այլ հարցեր, և Հանձնարարականը ընդունել միայն այն դեպքում, երբ ստացված պատասխանների հիման վրա Հաճախորդը նույնականացվում է:

5.6 Հեռախոսով փոխանցված Հանձնարարականը ներկայացնելիս Հաճախորդը արտասանում է 5.1. կետում նշված պայմանները, որից հետո Բրոքերի լիազորված անձը կրկնում է դրանք, իսկ Հաճախորդը հաստատում եմե բառի արտասանմամբ հաստատում է Բրոքերի լիազոր ներկայացուցչի կողմից Հանձնարարականի պայմանները ճշգրտորեն ընկալելու փաստը:

5.7 Հաճախորդի կողմից Հանձնարարականը թղթային ձևով Բրոքերին ներկայացվում է երկու օրինակից առձեռն առաքմամբ, ընդ որում մեկ օրինակը մնում է Բրոքերի մոտ, իսկ մյուս օրինակը

«Հանձնարարականը ընդունված է» նշագրմամբ և Բրոքերի ստորագրությամբ վերադարձվում է Հաճախորդին:

5.8 Ծածկագրային քարտին Հաճախորդի կողմից չտիրապետելու և/կամ այն իր տրամադրության տակ չգտնվելու դեպքում Հաճախորդի կողմից Հանձնարարական ներկայացնելիս, Բրոքերը տվյալ պահին գեներացնում է մեկանգամյա օգտագործման ծածկագիր, որն ավտոմատ կերպով ուղարկվում է հաճախորդին՝ նրա հետ արդեն իսկ կնքված՝ Պայմանագրում նշված էլ. փոստի հասցեին և/կամ հեռախոսահամարին:

5.9 Հաճախորդը պարտավորվում է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները և պատշաճ վերահսկողությունը, որպեսզի բացառի իր իրավասու էլեկտրոնային հասցեներին կամ այլ կապի միջոցներին /հաղորդակցման եղանակներին/ և/կամ անհատական ծածկագրային քարտին համապատասխան իրավասություն չունեցող անձանց /ոչ իրավասու անձանց/ կողմից մուտքը և/կամ նրանց հասանելիությունը: Համապատասխանաբար, Բրոքերը պատասխանատվություն չի կրում այն բոլոր դեպքերի համար, երբ Հաճախորդի և/կամ նրա Հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է դարձել նման իրավասություն չունեցող անձանց և/կամ Հանձնարարականը կամ այլ հաղորդագրությունը տրամադրվել է Հաճախորդի անունից, սակայն նման լիազորություն չունեցող անձանց կողմից ու կատարվել է Բրոքերի կողմից, պայմանով, որ Բրոքերը Հաճախորդի/Հաճախորդի անունից հանդես եկող անձի ինքնության ստուգման և նույնականացման, ինչպես նաև իրավասությունների ստուգման նպատակով ձեռնարկել է Պայմանների 11.5 կետով նախատեսված ողջամիտ քայլերը: Բոլոր դեպքերում կապի միջոցների և/կամ անհատական ծածկագրային քարտի և/կամ մեկանգամյա ծածկագրի չարտոնագրված մուտքի կամ ապօրինի հասանելիության հետևանքով առաջացած բոլոր իրավական ռիսկերն ու հետևանքները (ներառյալ՝ իրավասության կամ լիազորության սահմանազանցման ռիսկը) կրում է Հաճախորդը:

5.10 Բրոքերն իրավունք ունի մերժել Հաճախորդի Հանձնարարականի ընդունումը, ի կատարում փոխանցումը կամ կատարումը հետևյալ դեպքերում՝

1) Հաճախորդի կամ նրա լիազոր ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի, նույնականացման հաղորդված տվյալների բացակայության կամ հակասականության ու անհամապատասխանության կասկածի դեպքում.
2) Հանձնարարականի՝5.1.-ից 5.8. կետերով սահմանված բովանդակությունից, կարգից և պայմաններից շեղմամբ ներկայացնելու դեպքում, Հանձնարարականում նշված պայմանների՝ ՀՀ օրենսդրությանն ու սույն պայմաններին անհամապատասխանության դեպքում:
3) Եթե Բրոքերը զրկված է Հանձնարարկան փոխանցելու կամ կատարելու փաստացի հնարավորությունունից՝ ցանկացած պատճառով, ներառյալ՝ Գործակալների հետ պայմանգրային հարաբերությունների բացակայությունը, գործող պայմանագրային հարաբերությունների ներքո Գործակալների կողմից Հանձնարարկանների ընդունման և փոխանցումից հրաժարումը և այլն:

5.11 Հաճախորդը կարող է հետ կանչել ներկայացված Հանձնարարականը կամ դրա գնային, քանակական, ժամկետային կամ սակագնային պայմաններում փոփոխություններ կատարել Հանձնարարականի ներկայացման համար սույն պայմանների 5.1.-5.8. կետերում սահմանված պայմանների պահպանմամբ համապատասխան հաղորդագրություն ուղարկելով: Հաղորդագրությունը ընդունվում է ի կատարում, եթե տվյալ փոփոխվող/հետկանչվող Հանձնարարականով Բրոքերի կողմից դեռևս Գործարքի կնքման հայտը կամ օֆերտան չի բավարարվել կամ ակցեպտավորվել: Հանձնարարականի հետ կանչման հաղորդումը համարվում է ընդունված հաղորդագրությունը Բրոքերի ներկայացուցչին հասնելու պահից: Հաճախորդի կողմից արդեն իսկ տրված Հանձնարարականի հետ կանչման մասին հաղորդագրությունը ընդունվելու

դեպքում այն կարող է իրականացվել Հանձնարարականի ներկայացմանը հաջորդող 10 (տասը) րոպեի ընթացքում, եթե Կողմերի միջև այլ բան չի համաձայնեցվել: Ընդ որում, եթե Հաճախորդի հետկանչման հաղորդումը ստանալու պահից մինչև Բրոքերի կողմից համապատասխան Հանձնարարականով համապատասխան ԱՀ-ից գործարքի կնքման հայտը հետ կանչելու հաստատվելը ընկած ժամանակահատվածում Հանձնարարականով Գործարքը կնքվում է, Հանձնարարականը հետ կանչելու մասին հաղորդագրությունը Բրոքերի կողմից չի կատարվում:

5.12 Եթե Հաճախորդի կողմից տրված Հանձնարարականով Գործարքի ծավալը գերազանցում է 1,000,000 ԱՄՆ դոլարը կամ համարժեք այլ արժույթը, ապա հաճախորդը պարտավորվում է Հանձնարարականը տալուց առնվազն 3 աշխատանքային օր առաջ տեղեկացնել Բրոքերին նման Հանձնարարական տալու մտադրության մասին: Հակառակ դեպքում Բրոքերն իրավունք ունի մերժել պատվերի ընդունումը:

5.13 Առաջնային շուկայում գործարքների դեպքում Բրոքերն իրավունք ունի մերժել պատվերի ընդունումը, եթե Հաճախորդն այն ներկայացրել է ստորև նշված ժամկետների խախտմամբ.

1) ՀՀ պետական պարտատոմսերի դեպքում՝ ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվա ժամը 11:00,

2) Կորպորատիվ արժեթղթերի դեպքում՝ ոչ ուշ, քան տեղաբաշխման պայմաններով սահմանված ժամից 30 (երեսուն) րոպե առաջ:

5.14 Հաճախորդը կարող է ոչ բավարար ծածկույթով գործարք կնքելու Հանձնարարական ներկայացնել և այդ նպատակով Բրոքերից ստանալ դրամական կամ արժեթղթերի փոխառություն, եթե Բրոքերի հետ ունի կնքված համապատասխան լրացուցիչ Համաձայնագիր՝ ըստ այդ համաձայնագրի պայմանների:

5.15 Բրոքերը իրավունք ունի մերժել ընդունված Հանձնարարականի կատարումը, եթե այն ընդունելուց հետո պարզվում է, որ Հաճախորդի հաշիվներում առկա չեն բավարար միջոցներ (բացառությամբ ոչ բավարար ծածկույթով կամ Վերջնահաշվարկի շեղման հնարավորությամբ առավելագույն մեծության շրջանակներում իրականացված գործարքների)՝ հանձնարարականը կատարելու և այդ հանձնարարականի կատարման դիմաց վճարները գանձելու համար, ընդ որում Բրոքերին սույնով իրավունք է վերապահվում անակցեպտ կարգով, առանց հաճախորդի նախնական ծանուցման գանձել Հաճախորդի հաշիվներում առկա գումարները՝ համապատասխան գործարքը կատարելիս կամ դրանից հետո ցանկացած ժամանակ: Հանձնարարականը կարող է չկատարվել նաև այն դեպքում, եթե Հաճախորդի հաշվում առկա՝ Հաճախորդի Միջոցները, որոնց նկատմամբ տրվել է Հանձնարարականը, ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ արգելադրված են : Վերջնահաշվարկի շեղման հնարավորությունը կարող է տրամադրվել Հաճախորդին միայն Պայմանագրով սահմանված լինելու դեպքում: Վերջնահաշվարկի շեղման հնարավորության նախնական առավելագույն մեծությունը սահմանվում է յուրաքանչյուր օրվա և դեպքի համար միակողմանիորեն Բրոքերի կողմից, որի մասին տեղեկատվությունը կարող է հաղորդվել Հաճախորդին Հանձնարարական ներկայացնելուց առաջ: Սահմանված առավելագույն մեծությունը գերազանցող ծավալով Հանձնարարականները ենթակա են մերժման և տվյալ պահի դրությամբ շեղման հնարավորության առավելագույն մեծության ստուգումը բացառապես Հաճախորդի պատասխանատվությունն է: Հաճախորդին Վերջնահաշվարկի շեղման հնարավորություն տրամադրելու դեպքում Հաճախորդը Պայմանագրի կնքման ուժով Բրոքերին տալիս է անհետկանչելի Հանձնարարական վաճառելու Հաճախորդի Բրոքերի մոտ վարվող արժեթղթերի հաշիվներում առկա արժեթղթերը (առանց սահմանափակման), եթե Վերջնահաշվարկի շեղման հնարավորությամբ կնքված Գործարքի կնքման օրվա ավարտի դրությամբ Բրոքերային հաշվում առկա չեն բավարար դրամական միջոցներ կնքված գործարքներով Վերջնահաշվարկ կատարելու համար: Բրոքերը նշված դեպքում իրացնում է Հաճախորդի արժեթղթերը շուկայում հնարավոր

ողջամտիտ գնով՝ ստացված միջոցները ուղղելով հետևյալ հերթականությամբ՝ 1. Վերջնահաշվարկի շեղման հնարավորությամբ կնքված գործարքներով Վերջնահաժվարկի իրականացմանը, 2. Բրոքերի պարգևավճարներով Հաճախորդի պարտավորությունների մարմանը, 3. մնացած գումարը փոխանցվում է Հաճախորդի Բրոքերային հաշվին:

5.16 Հանձնարարականի կատարումը մերժելու դեպքում Բրոքերն այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հաճախորդին էլեկտրոնային փոստի միջոցով կամ հեռախոսով համապատասխան ծանուցում ուղարկելով:

5.17 Բրոքերն իրավասու է մերժել/չկատարել Հաճախորդի կողմից ներկայացված Հանձնարարականը կամ Հանձնարարականի հետ կանչման հաղորդագրությունը կախված շուկայի տեսակից (բորսայական, արտաբորսայական, կարգավորված կամ ոչ) և վայրից, գործարքի բնույթից և կատարման ժամկետներից, դեպոնացման գործընթացների ապահովման համար անհրաժեշտ ժամկետներից և/կամ Բրոքերի կողմից Հանձնարարականի ներկայացման և հետ կանչման համար սահմանված վերջնաժամկետներից /առկայության դեպքում/: Ամեն դեպքում, Բրոքերն իր պաշտոնական ինտերնետային կայքում տեղադրված հայտարարության և Հաճախորդի կողմից ընտրված հաղորդակցման եղանակով տեղեկացնում է Հաճախորդներին Հանձնարարականների կատարման ու դրա ժամկետների հետ կապված իրեն հայտնի ցանկացած սահմանափակումների, խոչընդոտների ու մանրամասների մասին:

5.18 Գործարքներ կնքելու համար ԱՀ-ների կամ Բանկի գործընկերների կողմից 1 հանձնարարականով գնվող/վաճառվող արժեթղթերի նվազագույն քանակական/ծավալային սահմանափակումներ սահմանված լինելու դեպքում այդ սահմանափակումները տարածվում են նաև Հաճախորդի հանձնարարականների վրա, որի մասին Բրոքերը տեղյակ է պահում հաճախորդին:

5.19 Հաճախորդը ընդունում է, որ Հանձնարարականներով ձեռքբերման ենթակա արժեթղթերի շրջանակը, Գործարքների ծավալները, Գործարքներով Հանձնարարականների ներկայացման վերջնաժամկետները սահմանափակվում են նշված Գործարքների կատարումը ապահովող Գործակալների և ԱՀ-ների կողմից սահմանված արժեթղթերի ցանկով, ծավալային սահմանափակումներով/սահմանաչափերով և Հանձնարարականների ներկայացման/կատարման ժամկետային սահմանափակումներով: Ամեն դեպքում Հանձնարարականները Բրոքերը ընդունում է Գործառնական օրվա ընթացքում, ընդ որում տվյալ ԱՀ-ում Առևտրային նստաշրջանի ավարտից հետո և մինչև մյուս Առևտրային նստաշրջանի սկսվելը ներկայացված Շուկայական պատվերը ենթակա չի կատարման կամ ի կատարում հաղորդման:

6. ՈՉ ԲԱՎԱՐԱՐ ԾԱԾԿՈՒՅԹՈՎ ԵՎ ԱԾԱՆՑՅԱԼՆԵՐՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքմամբ բրոքերային ծառայություններ մատուցելու պայմանները և առանձնահատկությունները սահմանվում են Բրոքերի և Հաճախորդի միջև կնքվող առանձին համաձայնագրով, որը կնքվելու դեպքում հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և դրա վրա տարածվում են սույն պայմանները՝ այնքանով որքանով չեն հակասում դրա դրույթներին:

6.2 Ածանցյալներով Բրոքերային ծառայությունները մատուցվում են համապատասխան ածանցյալների առևտուր կազմակերպող ԱՀ-ների և Գործակալների կողմից սահմանված պայմանների համաձայն և դրանց կողմից սահմանված սահմանափակումները հաշվի առնելով:

6.3 Որոշակի Ածանցյալներով Հաճախորդի բաց դիրքի առկայության դեպքում՝ տվյալ ԱՀ-ում Ածանցյալի կատարման օրվա Առևտրային նստաշրջանին նախորդած Առևտրային նստաշրջանի բացման պահին /այսուհետ՝ Ապահովման պահ/ Հաճախորդի հաշվում Ածանցյալի կատարումից բխող պարտավորությունները բավարարելու համար անհրաժեշտ Միջոցների անբավարարության

դեպքում, Բրոքերին սույնով իրավունք է վերապահվում՝ փակել Ածանցյալով Հաճախորդի բաց դիրքը՝ վաճառելով Ածանցյալը: Միևնույն ժամանակ Ապահովման պահին Միջոցների բավարարության դեպքում՝ Ապահովման պահից մինչև Բրոքերի կողմից տվյալ Ածանցյալով բաց դիրքի փակումը կամ Ածանցյալի փաստացի կատարումն ընկած ժամանակահատվածում Բրոքերն իրավունք ունի չընդունել և ի կատարումն չփոխանցել Հաճախորդի այն Հանձնարարականները, որոնցով Գործարքների գինը գերազանցում է Հաճախորդի հաշվում առկա Միջոցների ընդհանուր արժեքի և Ածանցյալի կատարման համար անհրաժեշտ միջոցների տարբերությունը:

7. ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ, ՊԱՀԱՌՈՒԱԿԱՆ ԵՎ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7.1 Բրոքերի կողմից ծառայությունների մատուցման համար նախատեսված կամ դրանց արդյունքում ստացված Հաճախորդի՝ ՀՀ-ում թողարկված արժեթղթերը հաշվառվում են Պահառության պայմանագրի և սույն պայմանների համաձայն բացված և սպասարկվող արժեթղթերի հաշիվներում:

7.2 Բրոքերի կողմից ծառայությունների մատուցման համար նախատեսված, ինչպես նաև դրանց արդյունքում ստացվող՝ Հաճախորդի դրամական միջոցները փոխանցվում են Բրոքերային հաշվին՝ Գործարքի վերջնահաշվարկ իրականացնելու արդյունքում կամ Հաճախորդի գրավոր հանձնարարականի հիման վրա նրա՝ Բրոքերի մոտ բացված և սպասարկվող կամ այլ բանկերում բացված և սպասարկվող բանկային հաշիվներից:

7.3 Բրոքերային հաշվում առկա դրամական միջոցների (այն չափով, որով դրանք ծանրաբեռնված չեն ընդունված կամ կատարված Հանձնարարականով, Բանկի կամ երրորդ անձանց իրավունքներով) և սույն պայմանագրի համաձայն Բրոքերին վճարման ենթակա գումարների տարբերությունը հանդիսանում է Հաճախորդի նկատմամբ Բրոքերի անժամկետ պարտավորությունը:

7.4 Բրոքերային հաշվի մնացորդի դիմաց Բրոքերը Հաճախորդին տոկոսներ չի վճարում: Հաճախորդի Բրոքերային հաշվով գործառնությունները սահմանափակվում են հետևյալով.

1) Բրոքերային հաշվից գումարների ելքագրում և փոխանցում Հաճախորդի՝ Բրոքերի մոտ բացված և վարվող բանկային հաշվին կամ այլ բանկերում Հաճախորդի հաշիվներին,
2) Դրամական միջոցների մուտքագրում Հաճախորդի բրոքերային հաշվին՝ Բրոքերի մոտ բացված և վարվող բանկային հաշվից կամ այլ բանկերում Հաճախորդի հաշիվներից,
3) Սույն պայմանների համաձայն Վերջնահաշվարկ կատարելու համար անհրաժեշտ գործառնություններ:

7.5 Բրոքերային հաշիվներով գործառնությունները կատարվում են Հաճախորդի համապատասխան Հանձնարարականների հիման վրա, ընդ որում Հանձնարարականը հանդիսանում է համապատասխան չափով Բրոքերային հաշվով գործառնություն կատարելու հանձնարարական: Սույն պայմանների 7.4. կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված գործառնությունները կատարվում են համապատասխան հանձնարարական ներկայացնելուց հետո 2 գործառնական օրվա ընթացքում՝ բանկի ներքին ընթացակարգերին համապատասխան :

7.6 Առանց Հաճախորդի հանձնարարականի Բրոքերային հաշվից գումարներ դուրս են գրվում դատարանների օրինական ուժի մեջ մտած վճիռների հիման վրա, ինչպես նաև օրենքով, Հաճախորդի հետ Բրոքերի կնքած բոլոր պայմանագրերով սահմանված դեպքերում:

7.7 Բրոքերն իրավունք ունի իր հայեցողությամբ մերժել միջոցների մուտքագրումը Բրոքերային հաշիվ, եթե Բրոքերի ներքին գնահատմամբ Բրոքերային հաշվում միջոցների առակայությունը, հաշվի առնելով Հաճախորդի կողմից այդ միջոցների օգտագործմամբ կնքվելիք (կնքման հնարավորություն ունեցող)՝ գործարքների բնույթը և ռիսկայնությունը, կարող է հանգեցնել զգալի կորուստների Հաճախորդի և/կամ/ Բրոքերի համար: Բրոքերային հաշվի կարգավիճակ ունեցող բանկային հաշիվների կարգավիճակը և դրանց առանձնահատկությունները կարգավորող Հաճախորդի և Բրոքերի համաձայնությունները հրապարակային պայմանագիր չեն հանդիսանում և Հաճախորդը

ընդունում է Բրոքերային հաշիվ միջոցների մուտքի և ելքի առանձնահատուկ պայմանները և սահմանափակումները, որոնք առկա են սույն Պայմաններում:

7.8 Բրոքերային հաշվով գործարք կատարելու լիազորություն ունեն նույն անձինք, որոնք իրավասու են ներկայացնել Հանձնարարականներ Պայմանագրի համաձայն: Բանկում բացված բանկային հաշվով գործարք կատարելու հանձնարարական ներկայացնելու իրավասու անձի՝ Բրոքերային հաշվի գծով իրավասու անձից տարբեր լինելու պարագայում Հաճախորդի համար Բրոքերի սահմանված կարգի համաձայն հաստատվում է Հաշվով գործարք կատարելու իրավունք ունեցող ներկայացուցչի ստորագրության նմուշի և կնիքի (առկայության դեպքում) քարտ: Բրոքերը Միջոցների ներքին առանձնացված հաշվառում ապահովելու նպատակով վարում է դրամական միջոցների և արժեթղթերի հատուկ ներքին առանձնացված հաշվառման (արտացոլման)՝ տարբեր արժույթներով արտահայտված գրանցումների համակարգ, որտեղ արտացոլվում են նշված դրամական միջոցների շարժը և մնացորդը: Սույն կետում նշված համակարգը վարվում է նաև՝ Բրոքերի անվանատիրոջ հաշիվներում հաշվառվող՝ Հաճախորդի արժեթղթերի շարժը և մնացորդը արտացոլելու համար:

7.9 Սույնով Հաճախորդը տալիս է իր համաձայնությունը, որ Բրոքերը սույն պայմանագրի շրջանակներում իրեն տրամադրված և ստացված միջոցները օգտագործի ի շահ իրեն (Բրոքերի), այդ թվում գրավադրի դրանք՝ առանց խախտելու Հաճախորդի նկատմամբ իր ֆիդուցիար պարտականությունները:

7.10 Բրոքերը Հաճախորդի Միջոցները կարող է պահել անվանատիրոջ և իր կամ իր անունով այլ ֆինանսական հաստատություններում (այդ թվում՝ արտասահմանյան) բացված բանկային (թղթակցային) և դրամական միջոցների հաշվառման այլ հաշիվներում՝ ՀՀ կամ գործարքի կնքման այլ վայրի օրենսդրության և դրան համապատասխան կնքված պայմանագրերի համաձայն: Բրոքերին սույնով իրավունք է վերապահվում գործարքներ կնքելիս միացնել Հաճախորդի միջոցները իր այլ հաճախորդների, ինչպես նաև իր սեփական միջոցներին՝ ամեն դեպքում, սակայն, պահպանելով իր և Հաճախորդի, ինչպես նաև իր տարբեր հաճախորդների միջոցների առանձնացված հաշվառումը՝ ներքին հաշվառման (արտացոլման) համակարգի պատշաճ վարման միջոցով:

7.11 Սույն պայմաններով մատուցվող Բրոքերային ծառայությունների ընթացքում անհրաժեշտ պահառուական և վճարահաշվարկային գործողությունները, Հաճախորդի հաշիվներով գործառնությունները կարգավորվում են համապատասխանաբար Պահառության պայմանագրով, սույն պայմաններով և Բրոքերի ներքին իրավական ակտերով: Բրոքերային ծառայությունները մատուցելիս ձեռքբերվող և վաճառքի համար նախատեսված՝ Հաճախորդի արժեթղթերը հաշվառվում են Բրոքերի կողմից Հաճախորդի համար Պահառության պայմանագրին համաձայն բացված արժեթղթերի հաշվում՝ ընդ որում Պահառության պայմանագիրը գործում է՝ Պայմանագրին (ներառյալ սույն պայմանները) չհակասող մասով::

7.12 Սույն պայմանների համաձայն տրված՝ գործարք կատարելու Հանձնարարականը հանդիսանում է նաև Հաճախորդի արժեթղթերի հաշիվներով համապատասխան պահառուական գործառնություն կատարելու հանձնարարական, այդ թվում՝ Պահառության պայմանագրի իմաստով, մասնավորապես՝

1) արժեթղթերի ընդունում/մուտքագրում հաշվին,
2) արժեթղթերի փոխանցում/ելքագրում հաշվից,
3) արժեթղթերի արգելադրում/գրավադրում հօգուտ երրորդ անձանց և/կամ Բրոքերի կամ արժեթղթերի պահում

7.13 Հաճախորդը կարող է նաև Բրոքերին ներկայացնել իր արժեթղթերի հաշվով որոշակի գործառնություն (մուտքագրում, ելքագրում, փոխանցում, արգելադրում և այլն) կատարելու հանձնարարական՝ անկախ Բրոքերային ծառայություններով հանձնարարական ներկայացնելուց:

Նման դեպքում պահառուական գործառնության հանձնարարականը ներակայացվում է Պահառության պայմանագրում նշված կարգով, ձևով և պայմաններով ՝ հաշվի առնելով Պայմանագրի (ներառյալ սույն Պայմանների) կարգավորումները:

7.14 Սույն պայմանների իմաստով վերջնահաշվարկ է հանդիսանում Բրոքերի կողմից տվյալ Հանձնարարականով կատարված գործարքի արդյունքում Հաճախորդի պարտավորությունների կատարումը և գործարքի մյուս կողմից կատարման ընդունումը, մասնավորապես՝

1) Արժեթղթերի ընդունում, հաշվառում և փոխանցում
2) Դրամական միջոցների փոխանցում, ընդունում և հաշվառում, Ածանցյալներով տատանվող հաշվեկշռի լրացում
3) Սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված գործողությունները կատարելու համար արժութային փոխարկումներ

7.15 Եթե Բրոքերային հաշվում ներառված հաշիվների արժույթները չեն համապատասխանում Հանձնարարականով կնքված գործարքով վերջնահաշվարկ կատարելու համար անհրաժեշտ արժույթին կամ Հանձնարարականով գործարքի կատարման արժույթով Հաճախորդի հաշվի մնացորդը չի բավարարում համապատասխան Հանձնարարականով գործարքի արդյունքներով վերջնահաշվարկ կատարելու համար, Բրոքերը ի կատարում համապատասխան Հանձնարարականով գործարքի վերջնահաշվարկի իրականացնում է համապատասխան արժութային փոխարկումը՝ տվյալ օրվա դրությամբ Բանկում սահմանված կամ Հաճախորդի հետ փոխհամաձայնեցված՝ ՀՀ դրամի, Վերջնահաշվարկի և սույնում ստորև նշված արժույթների փոխարժեքին համապատասխան: Բրոքերը փոխարկումը իրականացնում է՝ 1-ին հերթին օգտագործելով USD, երկրորդ հերթին՝ AMD, երրորդ հերթին՝ EUR, չորրորդ հերթին՝ RUB հաշիվների մնացորդները:

7.16 Եթե Հանձնարարականով գործարքի վերջնահաշվարկի կատարման համար անհրաժեշտ արժույթի հաշվարկային դրույքը ՀՀ կենտրոնական բանկի կողմից չի սահմանվում, Բրոքերը կարող է չկատարել կամ չփոխանցել հաճախորդի Հանձնարարականը ի կատարում:

7.17 Բրոքերը Հաճախորդի Վերջնահաշվարկը իրականացնում է առանց Հաճախորդից լրացուցիչ հանձնարարականներ ստանալու: Կողմերը սույնով համաձայնվում են, որ Հանձնարարականը ինքնաբերաբար հանդիսանում է նաև Հաճախորդի միջոցներով վերջնահաշվարկ կատարելու հանձնարարական:

7.18 Հաճախորդը պարտավոր է ապահովել Բրոքերին վերջնահաշվարկի համար անհրաժեշտ միջոցներով՝ սույն պայմանների համաձայն Հաճախորդի հաշվում համապատասխան Միջոցների առկայությունը ապահովելով: Սույն կետում նշված պարտավորությունը չի տարածվում ոչ բավարար ծածկույթով գործարքներ կնքելու դեպքերի վրա, սակայն այդ դեպքում Հաճախորդի հաշվում պետք է ապահովվի Բրոքերի նկատմամբ պարտավորությունները ապահովելու համար անհրաժեշտ Միջոցների առկայությունը՝ համաձայն ոչ բավարար ծածկույթով գործարքների կնքման վերաբերյալ լրացուցիչ համաձայնագրի:

8. ԲՐՈՔԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

8.1 Սույն պայմանների համաձայն մատուցվող ծառայությունների դիմաց Բրոքերը հաճախորդից գանձում է պարգևավճար ըստ Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված Բրոքերային ծառայությունների մատուցման սակագների (Սակագներ):

8.2 Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված սակագները կարող են միակողմանիորեն փոխվել Բրոքերի կողմից և ուժի մեջ են մտնում Հաճախորդին այդ փոփոխության մասին ծանուցելու կամ Բրոքերի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու օրվան հաջորդող 11-րդ օրը:

8.3 Հաճախորդը պարտավոր է նաև հատուցել Բրոքերի կողմից Հաճախորդի Հանձնարարականների կատարման և ի կատարում հաղորդման հետ կապված գործառնական ծախսերը, որոնք կարող են առաջանալ Բրոքերի կողմից երրորդ անձանց ներգրավմամբ գործարքներ կնքելու և վերջնահաշվարկ ապահովելու անհրաժեշտությունից, մասնավորապես՝ ԱՀ-ների և Բրոքերի Գործակալների կողմից Բրոքերից գանձվող վճարներ (բացառությամբ Գործակալների հետ կնքված պայմանագրերով սահմանված սակագներով գանձվող մշտական և սովորական միջնորդավճարների) և այլն, որոնք տարբեր են՝ կախված ԱՀ-ից, գործարքի տեսակից, ծավալից և այլ հանգամանքներից: Նման ծախսերը չեն ներառվում Պայմանագրի Հավելված 1-ում սահմանված սակագներում: Հաճախորդին ներկայացվող հաշվետվություններում արտացոլվում են թե՛ նշված ծախսերը և թե՛ դրանց հատուցման համար Բրոքերի կողմից իրականացված գանձումներն ու պահումները:

8.4 Եթե Բրոքերը օրենքի համաձայն պարտավոր է իրականացնել Հաճախորդի հարկային գործակալի գործառույթները, ապա գանձում և փոխանցում է Հաճախորդի կողմից վճարման ենթակա համապատասխան հարկերը:

8.5 Սույն պայմաններում և Պայմանագրում նշված վճարները, ծախսերի հատուցումները, տոկոսները, տույժերն ու տուգանքները և Հաճախորդի՝ Բրոքերի նկատմամբ ցանկացած այլ տեսակի պարտավորությունների գումարները Բրոքերը պահում է Հաճախորդի կողմից իրեն տրամադրված միջոցներից և/կամ անակցեպտ կարգով գանձում է Հաճախորդի բանկային հաշիվներից, իսկ Հաճախորդը պարտավոր է ապահովել համապատասխան միջոցների առկայությունը նշված հաշիվներին: Բրոքերը հանձնարարականի կատարումից/հաղորդումից անմիջապես հետո գանձում է համապատասխան միջոցները Բրոքերային հաշիվներից:Ընդ որում, համապատասխան արժույթով Բրոքերային հաշվում միջոցների անբավարարության դեպքում համապատասխան միջոցները գանձվում են Հաճախորդի այլ հաշիվներից:

8.6 Սակագները չեն ներառում առևտրային համակարգերի, բորսաների, պահառուների, ռեեստրավարների և այլ անձանց) կողմից գանձվող միջնորդավճարները (բացառությամբ քլիրինգային վճարների), որոնք, ի հայտ գալու դեպքում, գանձվում են Հաճախորդի միջոցներից:

8.7 Հաճախորդի կողմից համապատասխան պահանջ ներկայացնելու դեպքում Բրոքերը մատնանշում է այն աղբյուրները, որոնցից կարելի է տեղեկություններ ստանալ 8.6. կետում նշված միջնորդավճարների վերաբերյալ:

9. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9.1 Սույն պայմանների 10-րդ բաժնով սահմանված կարգով և Հաճախորդի հետ համաձայնեցված հաղորդակցման եղանակով Բրոքերը Հաճախորդին ներկայացնում է ընթացիկ (ըստ յուրաքանչյուր գործարքի) և պարբերական (ամսական) հաշվետվություններ՝ Հաճախորդի հաշվի շարժի և վերջնական մնացորդի (դիրքի), ինչպես նաև Հաճախորդի հաշվում արտացոլված ակտիվներով (դրամական միջոցներ և արժեթղթեր) գործարքների և ակտիվների շարժերի վերաբերյալ՝ ամսական մեկ անգամ, բացառությամբ Էլեկտրոնային Առևտրային համակարգի միջոցով կնքվող գործարքների վերաբերյալ հաշվետվությունների, որոնք ներկայացվում են համակարգի միջոցով՝ հաճախորդի համաձայնության դեպքում:

9.2 Բրոքերը Հաճախորդին 9.1 կետում նշված բովանդակությամբ հաշվետվություն տրամադրում է նաև ըստ Հաճախորդի պահանջի՝ դրանում նշված ժամանակահատվածի կտրվածքով՝ այդպիսի պահանջ ներկայացնելու օրվան հաջորդող 3 օրվա ընթացքում: Թղթային հաշվետվությունը Հաճախորդը ստանում է Բրոքերի Գլխամասային գրասենյակ ներկայանալով:

9.3 Ամսական Հաշվետվությունը համարվում է ընդունված, եթե Հաճախորդը այն ստանալուց հետո 5 օրվա ընթացքում գրավոր չի առարկում դրա բովանդակության վերաբերյալ: Ընթացիկ հաշվետվությունը համարվում է ընդունված, եթե հաճախորդը այն ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում չի առարկում դրա բովանդակության վերաբերյալ:

10. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

10.1 Բրոքերի և հաճախորդի միջև ցանկացած տեղեկատվության փոխանակում կատարվում է հետևյալ եղանակներով՝

10.1.1 հեռախոս /հեռախոսային խոսակցություններ և/կամ կարճ հաղորդագրություն (sms)/,

10.1.2 էլեկտրոնային փոստ,

10.1.3 Բրոքերի պաշտոնական կայքէջ /հրապարակվող տեղեկատվություն/ (բացառությամբ Պայմանների 9.1 կետում նշված հաշվետվությունների, որոնք այս տարբերակով չեն կարող ներկայացվել Հաճախորդին),

10.1.4 Բրոքերի Գլխամասային գրասենյակում բնօրինակ փաստաթղթերի/տեղեկատվության հանձնում՝ ստացման փաստը հավաստող ստորագրությամբ:

10.2 Հաճախորդը համաձայնում է, որ սույն պայմանների 10.1 կետում նշված եղանակներից ցանկացածը իր համար հանդիսանում է կապի հուսալի միջոց, սակայն ՀՀ ԿԲ կանոնակարգերով պահանջվող տեղեկատվության փոխանակումը հիմնականում տեղի է ունենալու էլ. փոստի կամ հեռախոսի միջոցով: Ընդ որում, Հաճախորդի կողմից Պայմանների 9.1 կետում նշված հաշվետվությունների ներկայացման համար հեռախոսային կապը նախընտրելու դեպքում Հաճախորդի հետ հաղորդակցումը կատարվում է հետևյալ տրամաբանությամբ. Հաճախորդի հեռախոսահամարին կարճ հաղորդագրությամբ (sms) ուղարկվելու է տեղեկացում համապատասխան հաշվետվության կամ պահանջվող տեղեկատվության առկայության մասին, որը հաճախորդին հանձնվելու է Բրոքերի Գլխամասային գրասենյակի տարածքում առձեռն հանձնելու միջոցով՝ ստացման փաստը հավաստող ստորագրությամբ:

10.3 Պայմանագրով կարող է նախատեսվել, որ կոնկրետ հաճախորդի համար հատկապես որ միջոցն է համարվում հուսալի բացի 10.1. կետում նշվածներից կամ դրանցից մեկը, եթե Բրոքերը համաձայնվում է տեղեկատվության փոխանակություն իրականացնել կապի այդ միջոցներով:

10.4 Փաստաթղթաշրջանառությունը և տեղեկատվության փոխանակումը իրականացվում են հայերեն, սակայն Հաճախորդի պահանջով բրոքերային ծառայությունների մատուցման հետ կապված փաստաթղթաշրջանառությունը և տեղեկատվության փոխանակումը կարող են վարվել ռուսերեն և/կամ անգլերեն, Պայմանագրի համաձայն:

11. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

11.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրով ստանձնած իրենց պարտականությունների պատշաճ կատարման համար և պարտավոր են այդ պարտականությունները խախտելու դեպքում հատուցել մյուս կողմին պատճառված վնասը:

11.2 Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրի 4-րդ գլխում նշված իրենց երաշխիքների և հավաստիացումների արժանահավատության համար և պարտավոր են հատուցել մյուս կողմին այդպիսի երաշխիքների և հավաստիացումների՝ իրականությանը չհամապատասխանելու արդյունքում պատճառված վնասը: Կողմերը ազատվում են սույն պայմանագրով իրենց պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե դրա պատճառ է հանդիսացել մյուս կողմի՝ Պայմանագրի 4-րդ գլխում նշված երաշխիքների և հավաստիացումների իրականությանը չհամապատասխանելը: Յուրաքանչյուր կողմ պարտավորվում է հատուցել երրորդ կողմին պատճառված ցանկացած վնաս,

եթե այդ վնասը առաջանալու պատճառներից է հանդիսացել Պայմանագրի 4-րդ գլխում նշված երաշխիքների և հավաստիացումների՝ իրականությանը չհամապատասխանելը:

11.3 Բրոքերը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց, այդ թվում՝ գործարքների կնքման գործընթացում Բրոքերի կողմից ներգրավված Գործակալների (ենթակոմիսիոներների) և կամ Հաճախորդի միջոցները հաշվառելու համար որպես պահառու ընտրված անձանց, Գործարքների հակառակ կողմի անվճարունակության կամ սնանկությանհետևանքով Հաճախորդին պատճառված վնասի համար, եթե չգիտեր և չէր կարող իմանալ նշված հանգամանքների առկայության կամ անխուսափելիության մասին՝ վերջիններիս հետ պայմանագրային հարաբերություններ հաստատելիս:

11.4 Հաճախորդի Հանձնարարականներով կատարված գործարքների մյուս կողմի կողմից այդ գործարքով իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու ռիսկը կրում է Հաճախորդը, իսկ Բրոքերը հավաստում է, որ լավագույն ջանք կգործադրի՝ պատշաճ կատարում պահանջելու համար, սակայն նշվածի վերաբերյալ սույնով ոչ մի երաշխիք չի տալիս և պարտավորություն չի ստանձնում: Սույնով կողմերը հավաստում են, որ հաշվի առնելով այն, որ Հանձնարարականների կատարումը Հայաստանի Հանրապետությունից դուրս տեղի է ունենում կարգավորված շուկաներում՝ հիմնականում Գործակալների և հաջորդականորեն նրանց ենթագործակալների շղթայի միջոցով և այդպիսի Գործակալների և ենթագործակալների կողմից, որ Բրոքերը Հաճախորդի Հանձնարարականները միայն փոխանցում/հաղորդում է Գործակալներին ի կատարում, որոնք իրենց հերթին այն կարող են նույնպես ի կատարում փոխանցել իրեն ենթագործակալներին և Բրոքերը նման պայմաններում հնարավորություն չունի շրջահայացություն ցուցաբերել այդպիսի ենթագործակալ անձանց ընտրության հարցում, Բրոքերը ազատվում է Հանձնարարականի հիման վրա կնքված գործարքներով երրորդ անձանց կողմից իրենց պարտավորությունները չկատարելու համար պատասխանատվությունից: Սույնով Կողմերը համաձայնվում են, որ Բրոքերը համարվում է պատշաճ շրջահայացություն չցուցաբերած միայն այն դեպքում, երբ Հանձնարարականները կատարող կամ հաղորդող Գործակալներին ընտրելու/հնարավորություն ունենալով՝ ընտրել է այնպիսի անձ, որի սնանկության/անվճարունակության կամ դրա անխուսափելիության մասին տեղյակ է եղել ինքը՝ այդպիսի ընտրություն կատարելիս:

11.5 Բրոքերը ձեռնարկում է հետևյալ ողջամիտ քայլերը Հաճախորդին/նրա անունից հանդես եկող անձին նույնականացնելու և/կամ նրանց լիազորությունները ստուգելու նպատակով.

1) **հեռախոսային եղանակով ներկայացված Հանձնարարականի դեպքում՝** Հաճախորդին տրամադրված ծածկագրային քարտի վրա նշված ծածկագրերի կամ Պայմանագրով Հաճախորդի հետ համաձայնեցած հեռախոսահամարին և/կամ էլ. փոստին ուղարկված մեկանգամյա օգտագործման ծածկագրի համապատասխանություն, անհնարինության դեպքում՝ Հաճախորդի ինքնության ստուգում և նույնականացում Բրոքերի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

2) **թղթային եղանակով ներկայացված Հանձնարարականի դեպքում՝** Հանձնարարականի վրա զետեղված ստորագրության և կնիքի համապատասխանություն /բավարար չափով նմանություն/ Հաճախորդի և/կամ նրա անունից հանդես գալու իրավասություն ունեցող անձի ստորագրության և կնիքի հետ /առկայության դեպքում/,

3) **էլեկտրոնային եղանակով ներկայացված Հանձնարարականի դեպքում՝** Հանձնարարականի ուղարկման էլեկտրոնային փոստի հասցեի համապատասխանություն Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեի հետ:

11.6 Հաճախորդին տրամադրված ծածկագրային քարտը կորցնելու կամ երրորդ անձանց, այդ թվում Հաճախորդի աշխատակիցը հանդիսացող սակայն հանձնարարական ներկայացնելու լիազորություն չունեցող անձանց Հաճախորդի ծածկագրային քարտը հասանելի դառնալու պարագայում Հաճախորդիը պարտավոր է անհապաղ՝ Պայմանգրում նշված կապի հուսալի միջոցներով, ծանուցում ուղարկել Բրոքերին՝ նշված փաստերի վերաբերյալ, որի պարագայում Հաճախորդի դիմումի հիման վրա կապահովվի ծածկագրային քարտի ապաակտիվացումը: Մինչև համապատասխան ծանուցում ստանալը Հաճախորդի անունից Հանձնարարական ներկայացնողի կողմից ներկայացված տվյալների և Հաճախորդին անհատականացնող տվյալների համապատասխանության դեպքում Հանձնարարականը համարվում է ներկայացված Հաճախորդի իրավասու անձի կողմից և Բրոքերը դրանք դիտարկում է որպես իրավասու անձի կողմից ներկայացված՝ պատասխանատվություն չկրելով Հաճախորդի առջև իրավասություն չունեցող անձանց կողմից անհատականացնող տվյալների գիտությամբ և օգտագործմամբ Հանձնարարականները ներկայացնելու և դրանք կատարվելու արդյունքում Հաճախորդի կրած կորուստների համար: Բրոքերը պատասխանատվություն չի կրում ԱՀ-ների գործողությունների կամ անգործության արդյունքում, ինչպես նաև գործարքի կողմ հանդիսացող անձանց կողմից Հաճախորդի Միջոցներով վերջնահաշվարկի չկայացման կամ ոչ պատշաճ իրականացման համար՝ անկախ դրա պատճառներից, ինչպես նաև իր վերահսկողությունից դուրս ցանկացած բնույթի տեխնիկական խափանումների արդյունքում Հաճախորդին պատճառված վնասի համար:

11.7 Բրոքերը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կրած այն վնասների համար, որոնք առաջացել են Բրոքերի մոտ Հանձնարարականները կատարելու կամ ի կատարում փոխանցելու փաստացի անհնարինության իրավիճակ առաջանալու դեպքում՝ ցանկացած (այդ թվում՝ Բրոքերի բացառիկ, լիարժեք և ամբողջական վերահսկողության ներքո չգտնվող և երրորդ անձանց և արտաքին միջավայրի հետ կապված հանգամանքներով պայմանավորված) պատճառներով:

11.8 Ցանկացած դեպքում Բրոքերի պատասխանատվությունը Հաճախորդի առջև սահմանափակվում է դիտավորություն կամ ակնհայտ անփութություն ցուցաբերելու արդյունքում՝ Հանձնարարականների խախտմամբ գործարքներ կնքելու և սույն պայմաններով սահմանված համապատասխան իրավական հիմքերի բացակայության դեպքերում Հանձնարարականը չկատարելու դեպքերով և նրան պատճառված իրական վնասի չափով:

11.9 Հաճախորդը պարտավորվում է հատուցել Բրոքերի կրած ցանկացած վնաս, որը արդյունք է հանդիսացել Պայմանագրի և սույն Պայմանների համաձայն Բրոքերի կողմից Հաճախորդին ծառայությունների մատուցման շրջանակներում երրորդ անձանց կողմից Բրոքերին ներկայացված պահանջների բավարարման: Հաճախորդը ազատվում է պատասխանատվությունից միայն այն դեպքում, եթե այդպիսի պահանջների հիմք են հանդիսացել Բրոքերի՝ Հաճախորդի գործողություններով, այդ թվում՝ Հանձնարարականներով չպայմանավորված անիրավաչափ գործողությունները:

11.10

12. ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵԼԸ

12.1 Սույն պայմանները, լինելով Պայմանագրի անբաժանելի մասը, Հաճախորդի համար ուժի մեջ են մտնում Պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից և գործում են մինչև Պայմանագրի գործողության դադարումը:

Ամսաթիվ՝
Հաճախորդ՝
Ստորագրություն (կնիք) _____